ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___ » _____ 2026թ. **№_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

Ծ. ԻՍԱԿՈՎԻ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.15/31 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՐԱ ԵՎ ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.30/3 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Արա և Ռոբերտ Խաչատրյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Իսակովի պողոտայի հ.15/31 հասցեում, տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 2868.1քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.10102022-01-0266 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Լեռ Կամսարի փողոցի հ.30/3 հասցեին կից հատվածում տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող 1158.21քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«Ծ. ԻՍԱԿՈՎԻ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.15/31 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՐԱ ԵՎ ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.30/3 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Նախագծով առաջարկվում է Արա և Ռոբերտ Խաչատրյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Իսակովի պողոտայի հ.15/31 հասցեում և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 2868.1քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.10102022-01-0266 վկայական/ փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Լեռ Կամսարի փողոցի հ.30/3 հասցեին կից հատվածում և տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող 1158.21քմ մակերեսով հողամասի հետ:

Արա և Ռոբերտ Խաչատրյաններիը դիմել են Երևանի քաղաքապետարան Ծ. Իսակովի պողոտա 15/31 հասցեում գտնվող հողամասի կառուցապատման չափորոշիչների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար, որի արդյունքում պարզվել է, որ հողամասը Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի համաձայն ընդգրկված է անտառների գոտում և հետագա կառուցապատման հարցը հնարավոր չէ քննարկել և դիմումատուներին առաջարկվել է իրականացնել հողամասերի փոխանակում:

Մասնագիտական որակավորում ունեցող «ՖՈՒԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից իրականացնել է հողամասերի շուկայական արժեքի գնահատման աշխատանքներ և ըստ տրամադրված հաշվետվությունների՝ Իսակովի պողոտայի հ.15/31 հասցեում գտնվող Արա և Ռոբերտ Խաչատրյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի շուկայական արժեքը 25.02.2026թ դրությամբ կազմել է 487 558 000 ՀՀ դրամ, իսկ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Լեռ Կամսարի փողոցի հ.30/3 հասցեին կից հատվածում գտնվող հողամասի շուկայական արժեքը 11.02.2026թ դրությամբ կազմել է 471 022 000 ՀՀ դրամ: Սեփականատերերի կողմից ներկայացվել է տարբերություն կազմող մասի նկատմամբ Երևան համայնքին պահանջ չներկայացնելու վերաբերյալ դիմում:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու

համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ